ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 փետրվարի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

20
(2870)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՆՆԵԼ ԵՆ, ԲԱՅՑ ՁԵԿՈՒՅՑ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԳՐԵԼ

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը ձգձգում է 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող ԱԺ հանձնաժողովի աշխատանքների ամփոփումը:

Հանձնաժողովի վերջին նիստը տեղի էր ունեցել դեկտեմբերի 3-ին, արդեն մեկնարկել են ամփոփիչ զեկույցի նախապատրաստական աշխատանքները:

«ԱԺ կանոնակարգ» օրենքի 25-րդ հոդվածը սահմանում է՝ քննիչ հանձնաժողովն իր գործունեության արդյունքով Ազգային ժողովի նախագահին ներկայացնում է զեկույց, որը ներառում է հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաեւ դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության մշտական հարցերի հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը փորձում է ձգձգել դրա աշխատանքները. հանձնաժողովի անդամները մտադիր են եղել մինչեւ մայիս ավարտել աշխատանքները, որպեսզի զեկույցը հրապարակվի, բայց Անդրանիկ Քոչարյանն ասել է, որ չեն հասցնի, շատ աշխատանք կա անելու:

Թե ինչ կա Քոչարյանի մտքին, պարզ չէ. հավանաբար, ինքն էլ հասկանում է, որ իր գլխավորած հանձնաժողովն իրականում որեւէ աղմկահարույց բացահայտում չի անելու ու փորձում է ձգձգել զեկույցի հրապարակումը:

Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զեկույցը բաց քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում, հրապարակվում է նաեւ ԱԺ կայքում, իսկ փակ մասը քննարկվում է գաղտնի ռեժիմով: Նրանց քաղաքական նպատակը Նիկոլ Փաշինյանին պատերազմական հանցանքներից մաքրելն է:

ՔՊ-ականները մտադիր են արտաքին քաղաքական փոփոխությունների գնալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանականները որոշել են առավել խորացնել եվրոպական տարբեր հայտնի կուսակցությունների հետ փոխհամագործակցությունը: ՔՊ նախաձեռնող խմբի վերջին նիստին այս հարցը օրակարգային է եղել: Ինչպես մեզ փոխանցեցին, որոշումը Նիկոլ Փաշինյանն է կայացրել ու հրահանգել է թիմակիցներին ակտիվ աշխատանք տանել եվրոպական տարբեր հայտնի կուսակցությունների հետ, խորացնել համագործակցությունը նրանց հետ, անդամակցել: Ուշագրավ է նաեւ, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցը ՔՊ-ականների օրակարգում չի եղել: Սա եւս մեկ անգամ փաստում է այն մասին, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը փորձում է արտաքին քաղաքական վեկտորի կտրուկ փոփոխությունների գնալ, ու այդ ուղղությամբ արդեն քայլեր են ձեռնարկում: Թե ինչ վտանգներով է հղի այս իրավիճակը, դժվար է ասել:

Էկոնոմիկայի նախարարության առանցքային պաշտոնյան դեռ ստվերում է: Մինչ Էկոնոմիկայի նախարարությունում մոլեգնում են ձերբակալությունները, Կարեն Սարգսյանը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարը, որն ի պաշտոնե ստորագրել կամ մակագրել է նախարարության գրեթե բոլոր փաստաթղթերը, իր «հանգիստն» է անցկացնում ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում: Հատկանշական է, որ Սարգսյանը դեռ հեռավոր 2000-ականներին եղել է Գնումների գործակալության ղեկավարներից, ասել է թե՝ տիրապետում է ոլորտի «նուրբ արվեստին»: Նա 2001-2006 թվականներին եղել է ՀՀ ԿԱ պետական գնումների գործակալության աշխատանքների եւ ծառայությունների ձեռք բերման բաժնի պետ: 2006-2011 թվականներին ՀՀ ԿԱ պետական գնումների գործակալության ներքին հսկողության բաժնի պետ է եղել: Հատկանշական է, որ Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար Կարեն Սարգսյանը հայտնի ձերբակալություններից օրեր առաջ անակնկալ ազատվել էր զբաղեցրած պաշտոնից: Հավելենք նաեւ, որ նույն նախարարության շուրջ պայթած սկանդալից առաջ էլ Անի Իսպիրյանն էր ազատվել աշխատանքից, ինչին հաջորդեց նրա ձերբակալությունը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2024 թվականի հունվարի 15-ին գնել է 9 մլն 478 հազար 800 դրամ արժողությամբ արկղեր: Ուսումնասիրելով բաց աղբյուրներում տեղադրված գնման պայմանագրերը՝ պարզեցինք, որ գնման առարկան պարզապես արկղ չէ: Գնման առարկան ջերմային կարգավորմամբ արկղ է, որը նախատեսված է անխափան էլեկտրական սնուցման աղբյուրի տեղադրման համար: Արկղի մոդելը SNR-OWC-096060-CHE է, որը պատրաստված եւ արտադրված է Չինաստանում: Ըստ տեխնիկական բնութագրի՝ պաշտպանվածության կարգը պիտի լինի IP54, իսկ աշխատանքային ջերմաստիճանը՝ -50C-ից + 45C աստիճան, օդի հարաբերական խոնավությունը +20C աստիճանի դեպքում՝ 80%, աշխատանքային պայմանները՝ ցանկացած եղանակի դրսում շահագործում, ջերմային կարգավորման համակարգ, չափերը՝ 9U 600մմ խորությամբ, դուռը՝ առջեւից բացվող, փականով: Երաշխիքային ժամկետ՝ 1 տարի: Ընդհանուր առմամբ, նախարարությունը գնել է 20 նմանատիպ արկղեր, որի մեկ հատի արժեքը կազմել է 473 հազար 940 դրամ:

ԶՐՈՒՅՑ

«ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱ ՉԷ»

ArmLur.am-ը խաղտեխնոլոգ Արմեն Բադալյանի հետ զրուցել է խաղաբական վերջին կարեւոր իրադարձությունների մասին:

-Պարոն Բադալյան, տեսնում ենք՝ իշխող կուսակցության ներսում ինչ է կատարվում: Նիկոլ Փաշինյանն արդեն իր թիմակիցների նկատմամբ է ինչ-որ գործողություններ իրականացնում. սկզբում Ալեն Սիմոնյանի եղբոր կինն էր, հիմա Քերոբյանի նկատմամբ կալանավորման որոշում կայացվեց՝ տնային կալանք: Ի՞նչ է կատարվում իշխանության ներսում:

-Առանձնապես ոչ մի բան չի կատարվում, դա նոր երեւույթ չէ. իշխանության մեջ բազմիցս տարբեր գործիչներ ենթարկվել են քրեական հետապնդումների՝ փոխնախարարներ, այլ մակարդակով գործիչներ: Ասել, որ լուրջ գործընթաց է տեղի ունենում, ճիշտ չէ. դրանք ընդամենը բամբասանքի հիմքով են գալիս: Լուրջ փաստարկ չունենք, որ իշխանության մի թեւը մյուս թեւի մեջ գործողություններ է անում: Այն, որ իշխանության մեջ կան տարբեր թեւեր, որոնք իրենց միջեւ պայքարում են, դա էլ արդեն նորություն չէ: Այն, որ կոռուպցիան արդեն կա իշխանության մեջ, նույնպես նորություն չէ, որովհետեւ «Թանսփարենսի ինթերնեյշնըլ»-ը եւ «Հետք»-ը դրա մասին բազմիցս գրել են: Հիմա հերթական գործընթաց է՝նախարարի հետ կապված, որը կասկածվում է որոշակի ոչ օրինական գործարքներ իրականացնելու մեջ: Սրանից ինչ-որ լուրջ հետեւություններ անել եւ ենթադրել, թե հեսա վաղը իշխանությունը փլուզվում է, իրականությանը չի համապատասխանում:

-Իսկ Ձեզ համար հասկանալի՞ է՝ Նիկոլ Փաշինյանի նպատակը որն է, որ ընդդիմադիրներից անցավ իր թիմակիցներին:

-Ոչ մի թիմակիցների էլ նա չի անցել: Կան բազմաթիվ բամբասանքներ, որ մենք չենք կարող հիմք ընդունել: Քրեական գործ է ընթանում, եւ այդ գործի շրջանակում էլ տեղի ունեցան համապատասխան գործողությունները: Ասել, թե ընդդիմադիրներից անցել է իր թիմակիցներին, այդպիսի բան չկա, որովհետեւ նախարարն էլ անգամ իր թիմակիցը չէ, եթե իրական նայենք. ուղղակի ժամանակավոր նախարար է, եւ բազմաթիվ այդպիսի նախարարներ եկել-գնացել են:

-Պարոն Բադալյան, իսկ ի՞նչ եք կարծում, այս գործընթացը շարունակական կլինի՞, էլի պատժվողներ կլինե՞ն:

-Ոչ ոք չի կարող այդ հարցին պատասխանել, որովհետեւ Հայաստանը իրավական պետություն չէ, որ ասենք՝ այստեղ կասկածելի գործարքներ կան, եւ իրավապահ մարմինները անպայման դրա վրա ուշադրություն կդարձնեն: Հայաստանում իրավապահ համակարգը անկախ մարմին չէ, դրա համար ոչ ոք չի կարող ասել՝ կլինի, թե ոչ: Կլինի հրահանգ՝կանեն, չի լինի՝ չեն անի: Կլինի հրահանգ՝ ոչ ցանկալի մարդկանց նկատմամբ քրեական գործ հարուցել, կհարուցեն: Ոչ ոք չի կարող Ձեր հարցին պատասխանել:

-Պարոն Բադալյան, նաեւ ընդդիմադիր դաշտում այսպիսի մի տեսակետ է շրջանառվում, որ Նիկոլ Փաշինյանը փորձում է առաջիկայում սպասվող արտաքին անվտանգային լուրջ գործընթացներից ուշադրությունը շեղել: Դուք կիսո՞ւմ եք այս կարծիքը:

-Ո՛չ, չեմ կիսում, որովհետեւ ես չեմ կարծում, որ հանրությունը հինգ տարեկան երեխա է, որ կոնֆետ տաս, ինքն էլ նայի քո ձեռքի կոնֆետին եւ անվտանգային խնդիրների մասին մոռանա: Հանրությունը հինգ տարեկան չէ, եւ ձերբակալությունները չեն կարող նրա ուշադրությունը շեղել: Պետք չէ հանրությանը դեգեներատի տեղ դնել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

ԱՄՆ-Ն ՍԿՍԵԼ Է ՎԱՏ ԱՊՐԵԼ

Միջազգայնագետ Գրիգոր Բալասանյանն անդրադարձել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում այս տարի սպասվող նախագահական ընտրություններին, երկու հիմնական թեկնածուների՝ գործող նախագահ Ջո Բայդենի եւ նախորդ նախագահ Դոնալդ Թրամփի հնարավորություններին:

Միջազգայնագետը կարծիք հայտնեց, որ քաղաքականությունն առեւտրայնացնելու Թրամփի գործելակերպը շարքային ընտրողների շրջանում կարժանանա հավանության, որովհետեւ ամերիկյան հասարակությունն ինքնին օժտված է բիզնես տրամաբանությամբ եւ ամեն ինչ չափում է այն սկզբունքով, թե բխում է արդյոք այս կամ այն քայլը Միացյալ Նահանգների շահերից: Նրանք արդեն մեկ անգամ գործարար Թրամփին ընտրել են որպես նախագահ եւ շատ լավ հասկանում են, թե նա ինչ նկատի ունի, երբ շահեկան քաղաքական համաձայնագրերը համարում է հաջողված գործարք:

«Այդ հանգամանքն ընտրություններում միանշանակ ունենալու է իր ազդեցությունը, որովհետեւ Բայդենի կառավարման շրջանում ամերիկյան հասարակությունն ուղղակի սկսել է ավելի վատ ապրել: Դա կարող է ազդակ լինել Բայդենին չընտրելու եւ գործարար նախագահի հետեւից գնալու համար»,- ասաց միջազգայնագետը:

Նրա խոսքով՝ Թրամփի ընտրվելու դեպքում ԱՄՆ-ի քաղաքականությունը որոշակի փոփոխություններ կկրի:

«Նրա ընտրվելու դեպքում, իհարկե, կլինեն որոշակի փոփոխություններ: Թրամփը՝ որպես գործարար աշխարհի մարդ, շատ լավ հասկանում է, որ ուկրաինական ուղղությունը չափազանց ծախսատար է ԱՄՆ-ի համար, ուստի Ուկրաինային կստիպեն Ռուսաստանի հետ նստել բանակցությունների սեղանի շուրջ, եւ չի բացառվում, որ հենց ՌԴ-ի հետ կբանակցեն այդ երկրի հետագա ճակատագրի շուրջ»,- ասաց Բալասանյանը:

Անդրադառնալով այն դիտարկմանը, որ Թրամփի հայտարարություններն արմատապես հակասում են ամերիկյան քաղաքական վերնախավի ներկայիս գաղափարախոսությանն ու արդեն իսկ իրականացվող քաղաքականությանը՝ մեր զրուցակիցն ընդգծեց, որ Թրամփի հռետորաբանությունը որոշ չափով կհանդուրժվի:

«Հայտնի սենատորներից Լինդսի Գրեմը, ով հայտնի է ռուսաֆոբ հայացքներով, արդեն սկսել է հրաժարվել իր հայացքներից եւ դեմ է քվեարկել Ուկրաինային հատկացվելիք աջակցության հերթական փաթեթին: Այսինքն՝ ամերիկյան վերնախավի մոտեցումներում տեղի է ունենում որոշակի փոփոխություն, եւ, կարծես, սկսում են հասկանալ, որ ամեն դեպքում հնարավոր չէ Ուկրաինային ցուցաբերել անսահման օժանդակություն՝ ներդնելով ահռելի ֆինանսական միջոցներ, մանավանդ որ ԱՄՆ-ի տնտեսական վիճակն էլ այն չէ, ինչ հինգ կամ տասը տարի առաջ: Դրան գումարվում է տարեկան 5-6 միլիոն ներգաղթյալների անկանոն հոսքը Միացյալ Նահանգներ՝ հարուցելով լրջագույն տնտեսական խնդիրներ, սրելով նաեւ կրիմինալ վիճակը»,- պարզաբանեց միջազգայնագետը:

ՆԱ «ՆԱԽԿԻՆ Է»

«Շատ շուտ է խոսել իշխանական բուրգի ճաքերի մասին». այս մասին փետրվարի 16-ին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀԿ ԳՄ անդամ Սամվել Նիկոյանը:

«Նիկոլի մոտ միշտ անհրաժեշտություն կա հասարակության մի մասին ինչ-որ իրադրությունով կերակրել: Հների կերպարները սպառվել են, դրա համար սկսել է յուրայինների հետ նման կերպ վարվել»,-ասաց նա՝ անդրադառնալով Վահան Քերոբյանի հրաժարականին:

Հարցին՝ Քերոբյանը եւս դառնալու է «նախկին», Նիկոյանը պատասխանեց. «Արդեն, կարծում եմ, նա նախկին է»:

ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

Փետրվարի 13-ից 14-ը ՄԱԿ անվտանգության խորհրդում նախագահող Գայանայի նախաձեռնությամբ տեղի ունեցավ բաց քննարկում՝ «Կլիմայի փոփոխության եւ պարենային անապահովության ազդեցությունը միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանման վրա» խորագրով:

Հանդիպման ընթացքում ելույթներով հանդես են եկել ՄԱԿ գլխավոր քարտուղարը, ինչպես նաեւ մի շարք անդամ երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ ու ներկայացուցիչներ:

ՀՀ մշտական ներկայացուցիչ Միհր Մարգարյանն իր ելույթում շեշտել է պարենային ռեսուրսների շահագործման եւ սովահարությունը որպես պատերազմի գործիք կիրառելու անթույլատրելիությունը՝ընդգծելով, որ նման գործողություններով ոտնահարվում է միջազգային հումանիտար իրավունքը, որի կոպիտ խախտում է հանդիսանում նաեւ հակամարտություններից եւ ճգնաժամային իրավիճակներում հայտնված բնակչությանը հումանիտար աջակցությանը խոչընդոտելը:

Հայաստանի դեսպանը հիշատակել է Ադրբեջանի կողմից բնապահպանական կեղծ օրակարգի քողի ներքո Լեռնային Ղարաբաղի բնակչությանը ամիսներ շարունակ ապօրինի շրջափակման ներքո պահելը, ինչպես նաեւ հետագա լայնածավալ հարձակումը եւ, որպես հետեւանք, հայ բնակչության զանգվածային բռնի տեղահանությունն ու էթնիկ զտումը:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի շարունակական խախտումներին՝ դեսպան Մարգարյանը նշել է, որ դատապարտելի է Ադրբեջանի կողմից փետրվարի 13-ին Հայաստանի տարածքի նկատմամբ ռազմական ուժի կիրառումը, որը հանգեցրել է մարդկային կյանքի կորուստների: Շեշտվել է, որ այդպիսի սադրանքները հերթական անգամ ապացուցում են, որ Ադրբեջանը մտադրություն չունի պահպանելու միջազգային իրավունքը՝ ընդգծելով, որ ՄԱԿ-ը եւ Անվտանգության խորհուրդն առանձնահատուկ պատասխանատվություն են կրում միջազգային անվտանգության եւ իրավունքի գերակայության պահպանման գործում:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսելյան պաշտոնական այցի շրջանակներում ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանն ու ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ Արմեն Ղազարյանը երկկողմ հանդիպումներ են ունեցել Եվրոպական հանձնաժողովի Միգրացիայի եւ ներքին գործերի հարցերով գլխավոր տնօրինության (DG Home) ղեկավար Բեատա Գմինդերի, Եվրոպական հանձնաժողովի հարեւանության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության (DG NEAR) Արեւելյան հարեւանության եւ ինստիտուցիոնալ կայացման հարցերով տնօրեն Ադրիեն Կիրալիի, Եվրոպական հանձնաժողովի Բնակչության պաշտպանության եւ մարդասիրական օգնության գործողությունների գլխավոր տնօրինության (DG-ECHO) ղեկավար Միխայելա Մատուելլայի հետ:

Կողմերը քննարկել են Ներքին գործերի նախարարության ձեւավորման, ոստիկանության, փրկարար ծառայության, միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության բարեփոխումների ընթացքին ու նշված ուղղություններով ՀՀ-ԵՄ համագործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր: ՆԳ նախարարի տեղակալը կարեւորել է նշված ուղղություններով ԵՄ հետ արդյունավետ գործընկերությունը՝ փաստելով, որ ձեռնարկված եւ նախանշվող քայլերը հանրային անվտանգության երաշխավորման կարեւոր բաղադրիչներ են:

Արփինե Սարգսյանն ընդգծել է Փրկարար ծառայության ոլորտում համագործակցության նոր օրակարգի ձեւավորման կարեւորությունը: Անդրադարձ է կատարվել նաեւ վիզաների ազատականացման թեմային. շեշտվել է ՀՀ պատրաստակամությունն այդ ուղղությամբ գործողությունների ծրագիր մշակելու եւ այն հետեւողականորեն կենսագործելու հարցում:

Եվրոպական կողմը բարձր է գնահատել ՆԳՆ ոլորտային ուղղություններով իրականացված բարեփոխումները եւ պատրաստակամություն հայտնել շարունակելու արդյունավետ եւ սերտ համագործակցությունը՝ համագործակցության օրակարգի ընդլայնման ուղղությամբ նոր հնարավորությունների ներգրավմամբ:

ՀՀ–ԻՐԱՆ

Հայաստանն ու Իրանը պայմանավորվել են երկկողմ առեւտրաշրջանառությունն ավելացնել եւ հասցնել տարեկան 3 մլրդ դոլարի: Ինչպես հայտնում է IRNA-ն, այս մասին հայտնել է Իրանի պլանի եւ բյուջեի կազմակերպության ղեկավար Դավուդ Մանզուրին:

Հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստի փակմանը Հայաստանի Հանրապետությունը եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը ստորագրել են 19 ոլորտներում տնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

Ըստ Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալների՝ նախորդ տարի Իրանի հետ Հայաստանի առեւտրաշրջանառությունը կազմել է 692 մլն 496.8 հազար դոլար՝ 2022-ի նկատմամբ նվազելով 2.5 տոկոսով:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒԶՈՒՐՊԱՑԻԱ

Գարդման-Շիրվան-Նախիջեւան համահայկական միությունը հայտարարություն է տարածել՝ անդրադառնալով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ երդման արարողությունից հետո ունեցած ելույթին: Ներկայացնում ենք Միության հայտարարությունը:

«Բռնատիրության վերարտադրությունը, իր բոլոր բացասական հետեւանքներով հանդերձ, Ադրբեջանում այլեւս իրողություն է: Իլհամ Ալիեւի հռչակած նոր դարաշրջանը ոչ այլ ինչ է, քան հռչակված ժողովրդավարության չհայտարարված ուզուրպացիա: Իր պաշտոնավարման երրորդ տասնամյակով Իլհամ Ալիեւը հեռակա մրցակցության մեջ է մտնում անցյալում ապրած Արեւելքի բռնապետների հետ՝ ազգայնականության աստառով փաթեթավորելով սեփական վարչակարգի միահեծանության ձգտումները:

Ադրբեջանի նախագահի՝ երդմնակալությանը հաջորդած ելույթը պարզ վկայությունն է այն բանի, որ Ադրբեջանում ծայրահեղ ռասիզմն ու ազգայնականությունը հասել են իրենց կարելիության գագաթնակետին: Որպես քաղաքական գործիչ՝ Իլհամ Ալիեւն իրեն թույլ է տալիս հայ ազգի ներկայացուցիչներին անվանել «սատանաներ», «թշնամիներ», այն ազգին, որին բոլորովին վերջերս, սովամահության եզրին հասցնելով, խաղաղ ինտեգրացիայի խոստումներ էր տալիս:

Ադրբեջանի նախագահը, խոսելով Ստեփանակերտում իր անօրինական ընտրության մասին, ասում է, թե այդ շենքում են ծրագրվել ադրբեջանցիների նկատմամբ «արյունալի հանցագործությունները», սակայն նա, կարծես թե, մոռանում է հիշատակել, թե որ շենքերում են ծրագրվել Սումգայիթի եւ Բաքվի հայկական ջարդերը, որ շենքերում են նախապատրաստվել պատմական Գարդմանի եւ Նախիջեւանի հայաթափման վայրագ գործողությունները, եւ վերջապես մի՞թե իր երդմնակալության վայրը չէ Լեռնային Ղարաբաղի հայության էթնիկ զտման գաղափարների որջը:

Ադրբեջանի նախագահը կրկին ի ցույց դրեց պատմության թերիմացությունը կամ խիստ ընտրանքային մեկնաբանումը: Փանահ խանը, որին աղբյուրները իրավացիորեն որպես «չարչի» են հիշատակում, հաստատվել է Լեռնային Ղարաբաղում շնորհիվ հայ մելիքների անթույլատրելի հակասությունների, եւ սկսել տեղի հայ բնակչության նկատմամբ բռնությունների ու տեղահանությունների պրակտիկան:

Ադրբեջանական վարչակարգը մշտապես քննադատում է Հայաստանին իր ռազմական կարողությունների բարելավմանն ուղղված քայլերի համար՝ դրանք համարելով խոչընդոտ խաղաղության ճանապարհին, սակայն Ադրբեջանի նախագահը բացեիբաց հայտարարում է, որ անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվում իրենց զինված ուժերի հետագա զարգացման համար, ձեռք է բերվում անհրաժեշտ սպառազինություն, տեխնիկա, ստեղծվում են նոր զինված կազմավորումներ: Ըստ նրա՝ հատուկ նշանակության ջոկատների թիվը մի քանի անգամ ավելացել է, նորաստեղծ զինված հրամանատարական ստորաբաժանումներում զինծառայողների թիվը հազարներով է չափվում, եւ այդ գործընթացը շարունակվում է: Հետեւապես՝ ինչ է այս հայտարարությունը, եթե ոչ ռազմականացման եւ ծավալապաշտական նկրտումների պարզ խոստովանություն: Խնդրահարույց է նաեւ այն, թե, «Մեզ ոչ ոք չի կարող կանգնեցնել» ասելով, ինչ է պատկերացնում Իլհամ Ալիեւը. Ադրբեջանի ո՞ր գործողությունները, նման ռազմականացման պայմաններում, ոչ ոք չի կարող կանգնեցնել, եթե Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներ չունի: Եթե իրապես Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներ չկան, ապա ինչպե՞ս բացատրել Հայաստանի սուվերեն տարածքի օկուպացիան 2021 թ. մայիսից ի վեր:

Ալիեւյան վարչակարգը «զգուշացնում է» շանտաժի լեզվով չխոսել՝ շանտաժ համարելով Հայաստանի եւ միջազգային հանրության կոչերը՝ վերադառնալու բանակցային գործընթացին, մինչդեռ հենց Ադրբեջանն է տարատեսակ քաղաքական-տնտեսական լծակներով տորպեդահարում բանակցային գործընթացը՝ անթույլատրելիորեն միջամտելով Հայաստանի ներքին գործերին, չիրականացնելով պատմական Գարդմանի, Շիրվանի ու Նախիջեւանի ավելի քան կես միլիոն հայրենազրկված հայերի եւ Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչության անօտարելի իրավունքների անհապաղ վերականգնման հանձնառությունը:

Գարդման-Շիրվան-Նախիջեւան համահայկական միությունը խստորեն դատապարտում է Ադրբեջանում պետականորեն հնչող ռասիզմն ու էքստրեմիստական հայատյացությունը: Մենք կոչ ենք անում միջազգային հանրությանը քննել ադրբեջանական ծավալապաշտական հռետորաբանությունը եւ համարժեք արձագանք տալ այն վտանգներին, որոնք բխում են այդ հռետորաբանությունից»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԳՆ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Մյունխենում հանդիպում է ունեցել Տոգոյի արտաքին գործերի, աֆրիկյան ինտեգրացիայի եւ սփյուռքի նախարար Ռոբերտ Դյուսեի հետ:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրությունից, զրուցակիցները քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացման եւ քաղաքական երկխոսության ակտիվացման հնարավորությունները՝ արտահայտելով երկուստեք պատրաստակամություն: Ընդգծվել է տարբեր ուղղություններով, մասնավորապես՝ տնտեսության, առեւտրի, ինչպես նաեւ մշակույթի ոլորտներում կապերի զարգացման եւ այդ նպատակով անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտի ձեւավորման, բարձրաստիճան փոխայցելությունների կազմակերպման հարցում փոխադարձ հետաքրքրությունը:

Հայաստանի եւ Տոգոյի ԱԳ նախարարները քննարկել են նաեւ միջազգային հարթակներում փոխգործակցության հարցեր:

Հանդիպմանն անդրադարձ է կատարվել նաեւ Հարավային Կովկասում անվտանգության իրավիճակին: Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարը ներկայացրել է առկա մարտահրավերները եւ դրանց հաղթահարման հարցում հայկական կողմի տեսլականը:

ԿԵՂԾ ԱՐՏԱՐԺՈՒՅԹ

ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՆԳՆ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի քրեական հետախույզները փետրվարի 9-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ փետրվարի 7-ի ժամը 19.00-ի սահմաններում կեղծ արտարժույթ իրացնելու նպատակով «Օպել» մեքենայով Արփի բնակավայրի Աղավնաձորի շուկա կոչվող տարածքի տաղավարներ են գնացել Երևանի բնակիչ երկու տղամարդ եւ մի կին: Նրանք մի տաղավարից 80 000 դրամի գնումներ են արել՝ վաճառողին տալով երկու 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամ:

Նույն օրը կեղծ արտարժույթ իրացնելու վերաբերյալ օպերատիվ տեղեկություն է ստացվել նաեւ ոստիկանության Ջերմուկի բաժնում: Երեւանցի վերոհիշյալ անձինք փետրվարի 7-ին Ջերմուկ քաղաքի ըմպելասրահի տարածքում խոտաբույսերի առքուվաճառքով զբաղվող մի կնոջից 16 000 դրամի գնումներ են արել, վճարումը կատարել են 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամով, եւ ստանալով 24 000 դրամ մանրադրամը՝ հեռացել են:

Վայոց ձորի մարզի քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Փետրվարի 11-ին՝ ժամը 14.30-ի սահմաններում, Վայոց ձորի մարզի պարեկները տեղեկություն էին ստացել, որ «Օպել» մակնիշի մեքենայի ուղեւորները փորձել են Արենի գյուղի տաղավարներից կեղծ թղթադրամներով գնումներ կատարել: Իրացնելով ստացված տեղեկությունը՝ պարեկները Երեւան-Մեղրի ճանապարհի 123,5-րդ կմ-ին կանգնեցրել են վերոհիշյալ «Օպելը» եւ կեղծ թղթադրամներ իրացնելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել ու ոստիկանության Եղեգնաձորի բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչներ 53-ամյա վարորդին, 37 եւ 25 տարեկան երկու ուղեւորին, որոնք ամուսիններ են:

Անձնական խուզարկությամբ վարորդի մոտ հայտնաբերվել է մեկ 100 դոլար անվանական արժեքով ակնհայտ կեղծ թղթադրամ, իսկ 37-ամյա ուղեւորը հայտնել է, որ մեքենայում գտնվող պայուսակում կա 100 դոլար անվանական արժեքով 10 կեղծ թղթադրամ:

Մեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք, իսկ ձերբակալվածները կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են Վայոց ձորի մարզի քննչական վարչություն:

Այդ ընթացքում Եղեգնաձորի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են, որ նշված անձինք փետրվարի 7-ի ժամը 19.30-ի սահմաններում Նորավանքի շուկա կոչվող տարածքում նույնպես առեւտուր են արել՝ վճարումը կատարելով երեք 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամներով:

Բոլոր անձինք ներկայացրել են իրենց տրված կեղծ 100-դոլարանոցները:

ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության, Եղեգնաձորի բաժնի եւ Վայոց ձորի մարզի քննչական վարչության ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվել է, որ 37-ամյա տղամարդուն կեղծ թղթադրամներն իրացրել էր մայրաքաղաքի Խաղաղ Դոնի փողոցի շենքերից մեկի բնակիչը: Փետրվարի 14-ին նա նույնպես ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Եղեգնաձորի բաժին, ապա ներկայացվել վարույթն իրականացնող մարմին: Խուզարկությամբ նրա բնակարանում հայտնաբերվել է մեկ կեղծ 100-դոլարանոց:

Երեք տղամարդիկ կալանավորվել են, իսկ 25-ամյա կնոջ նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում փետրվարի 14-ին մայրաքաղաքի Կողբի 2-րդ փողոցի տանը կատարվել է առգրավում, որի ընթացքում 25-ամյա կինը իրավապահներին է ներկայացրել 100 դոլար անվանական արժեքով 46 կեղծ թղթադրամ:

Քրեական վարույթը շարունակվում է

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿԱՆ

ՀԵՐՔՈՒՄ

ՎՍՏԱՀՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

2019թ. սեպտեմբերի 19-ին, «Ֆ.Գ.» ՍՊ ընկերության (Հայաստանում զբաղվում է բրենդային ապրանքների վաճառքով) տնօրեն Ռ.Պ.-ի հաղորդման հիման վրա, ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ֆինչական երրորդ բաժնում նախաձեռնված թիվ 08812123 քրեական վարույթով 25.12.2023թ. հանրային քրեական հետաքննում էր նախաձեռնվել ընկերության գլխավոր հաշվապահ Ա.Դ.-ի նկատմամբ, ով մեղադրվում է վստահված գույքի հափշտակության, վճարահաշվարկային փաստաթուղթ կեղծելու եւ կեղծ փաստաթուղթ օգտագործելու ենթադրյալ հանցանքների կատարման մեջ:

Դատարանի 27.12.2023թ. որոշմամբ՝ Ա.Դ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց էր ընտրվել երկամսյա կալանքը: 2024թ. փետրվար ամսից Ա.Դ.-ի շահերի պաշտպանությունը ստանձնել է «LSA» փաստաբանական գրասենյակը, ում պաշտպանը փաստաբան Գուրգեն Ներսիսյանն է: Մեր վստահորդի կողմից ներկայացված մի շարք հիմնավոր փաստարկների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերջինս իրականում որեւէ միջոց չէր հափշտակել, մեղադրանքում ներկայացված դրամական միջոցների մի մասը ծախսվել էր տնօրենի հայեցողությամբ, իսկ մնացած մասը փոխանցվել էր տնօրենին, ընդ որում՝ նրա նախաձեռնությամբ՝ ոչ ուղիղ փոխանցման միջոցով, հավանաբար նրա բնակության երկրում հարկային կամ իրավական խնդիրներ չառաջացնելու համար:

Վերը ներկայացվածն ամբողջությամբ բացահայտելու համար պաշտպանի կողմից 25 կետանոց գրավոր միջնորդություն էր ներկայացվել նախաքննական մարմնին, որոնց թվում էր նաեւ Ա.Դադաշյանին հարցաքննելու միջնորդություն-պահանջը, սակայն առ այսօր նա չի հարցաքննվել, իսկ գործով էական առաջընթաց չկա: Պաշտպանության կողմի ներկայացրած միջնորդությունը եւ դրանում արտացոլված փաստարկներն ամբողջությամբ բավարար են՝ Ա.Դ.-ին առաջադրված մեղադրանքի անհիմն լինելը փաստելու համար, մինչդեռ դրանց իրականացման ուղղությամբ անհրաժեշտ ջանասիրություն ցուցաբերելու փոխարեն պահանջվում է վնասների հատուցում, փորձ է արվում արգելանք դնել Ա.Դ.-ի գույքի վրա:

Նկատի ունենալով, որ Ա.Դ.-ն գտնվում է անազատության մեջ, ՀՀ քննչական կոմիտեի եւ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազության ուշադրությունն ենք հրավիրում սույն վարույթով իրականացվող վարութային գործողությունների ընթացքի նկատմամբ եւ ակնկալում ենք, որ ամենասեղմ ժամկետում կկատարվեն ոչ միայն միջնորդությամբ ներկայացված վարույթային գործողությունները, այլեւ կվերացվի մեղադրյալի անձնական ազատության իրավունքի սահմանափակումը:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶՎԵԼ Է

Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից Արաբկիրի բաժին հունվարի 24-ի երեկոյան ահազանգ է ստացվել: Ջանգահարած տաքսու վարորդը հայտնել է, որ մոտեցել է Հրաչյա Քոչար փողոցի հասցեներից մեկը եւ նկատել, որ պատվիրատուն մարմնական վնասվածք ունի, արնահոսում է:

Տուժածը հիվանդանոցում ներկայացել է ուրիշ անուն-ազգանունով, սակայն իրավապահների աշխատանքի շնորհիվ երիտասարդի ինքնությունը պարզվել է:

«Արաբկիրի բաժնի եւ Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները, համադրելով ստացված օպերատիվ տեղեկությունները, պարզել են, որ տուժողը դեռեւս ինքնությունը չպարզված մի քաղաքացու հետ գնացել է Արաբկիր վարչական շրջանի ռեստորաններից մեկը՝ 42-ամյա տղամարդու հետ պարզաբանումների: Նա էլ, համաձայնության չգալով, տուժողի եւ նրա հետ եկած ընկերոջ հետ դուրս է եկել առանձնասենյակից, զանգահարել ազգականներին ու ընկերներին, որպեսզի գան՝ հաշվեհարդար տեսնելու: Ժամը 18.45-ին նրանք եկել են ռեստորան, որտեղ վիճաբանություն է սկսվել:

Տղամարդիկ դուրս են եկել ռեստորանի բակ, որտեղ 42-ամյա տղամարդն ու ընկերները կռփազենքով եւ ոտքերով հարվածներ են հասցրել տուժողին՝ պատճառելով բազմաթիվ մարմնական վնասվածքներ, իսկ 26-ամյա երիտասարդը դանակով հարվածներ է հասցրել նրան:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է 42-ամյա տղամարդու ընկերների եւ ազգականների ինքնությունը:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ մյուս մասնակիցներին հայտնաբերելու ուղղությամբ: Հանգամանքները պարզվում են»,- ասվում է հայտարարության մեջ:

ԴԺԳՈՀԵԼ ԵՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում պահվող, անժամկետ հացադուլ հայտարարած անձանց:

Նշվում է, որ փետրվարի 14-ին չհայտարարված այց է իրականացվել ՔԿՀ: ՄԻՊ ներկայացուցիչներն առանձնազրույցներ են ունեցել հացադուլ հայտարարած անձանց հետ, ուսումնասիրել նրանց առողջական վիճակին վերաբերող փաստաթղթերը:

«Ազատությունից զրկված անձինք հարցեր են բարձրացրել խցերում անհրաժեշտ պարագաների, օդափոխության համակարգի, ցուցված դեղորայքի բացակայության, խմելու ջրի որակի եւ այլնի վերաբերյալ, ինչը, ըստ իրենց, հանդիսացել է հացադուլի պատճառ»,- տեղեկացնում են ՄԻՊ աշխատակազմից:

Առանձնազրույցներից հետո քննարկումներ են տեղի ունեցել նաեւ ՔԿՀ վարչակազմի եւ քրեակատարողական բժշկության կենտրոնի համապատասխան ստորաբաժանման ներկայացուցիչների հետ:

Չհայտարարված այցի արդյունքները ամփոփվում են: Արձանագրված խնդիրների վերաբերյալ համապատասխան գրություններ կուղարկվեն իրավասու մարմիններին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 15-ից 16-ը ՀՀՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 82 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՓԱԿՎԵԼ ԵՆ

Վերջին շրջանում տուրիստական Դիլիջան քաղաքում փակվել են «ՎՏԲ» բանկի եւ «Հայբիզնեսբանկ»-ի Դիլիջանի մասնաճյուղերը, այդ բանկերի դիլիջանցի հաճախորդներին բանկերից հորդորել են այսուհետ օգտվել նշված բանկերի Իջեւանի մասնաճյուղերի ծառայություններից: Մասնաճյուղերի փակման հետեւանքով որոշակի թվով աշխատողներ կորցրել են աշխատանքը, Դիլիջանից մինչեւ Իջեւան հեռավորությունը 34 կմ է, ինչը դիլիջանցիների համար դժվարություն է այդ բանկերի Իջեւանի մասնաճյուղերից օգտվելու համար: Դիլիջանցիները հարցնում են՝ տուրիստական քաղաքում ինչու են բանկերի մասնաճյուղերը փակել:

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել մարզում իրականացվող, նախատեսվող պետական սուբվենցիոն ծրագրերի եւ նախկին տարիներից հետաձգված ծրագրերի վերաբերյալ: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «2023թ.-ին մեկնարկել է 2023թ.-ին հաստատված 15 սուբվենցիոն ծրագիր եւ 1 ծրագիր՝ 2022թ-ից տեղափոխված, 4,2 միլիարդ դրամ ընդհանուր արժեքով, բոլորը համայնքների կողմից դրվել են մրցույթի: Նշված ծրագրերից 13-ն ավարտվել են ամբողջությամբ, իսկ 3 ծրագրեր ավարտվել են մասամբ, որոնց չափաբաժինների մի մասը տարբեր պատճառներով տեղափոխվել է 2024 թվական: 2024 թվական է տեղափոխվել նաեւ 2022թ. հաստատված Դիլիջանի մշակույթի պալատի հիմնանորոգման եւ 2021 թվականին հաստատված Դիլիջան քաղաքի 5 բազմաբնակարան բնակելի շենքերի էներգոարդյունավետ արդիականացման ծրագրերի շինարարական աշխատանքները: Սրանք տեղափոխվել են եղանակային անբարենպաստ պայմանների, միցույթներում մասնակից չլինելու եւ այլ պատճառներով: Ներկայումս ընթացիկ ծրագրերը սրանք են: 2024 թվականի համար համայնքների կողմից ներկայացվել են 20 ծրագրերի ամբողջական փաթեթներ, որոնք գտնվում են քննարկման փուլում»:

ՉԵՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ

ԿԳՄՍ նախարարությունը բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների համար հայտարարել է կամավոր ատեստավորման նոր գործընթաց: Նախարար Ժաննա Անդրեասյանը խոստացել է, որ պետբյուջեն կփոխհատուցի բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների բուհում սովորելու վարձը, նաեւ խոստացել է միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչներին աջակցել ցանկության դեպքում այլ աշխատանքի տեղավորվելու հարցում: Տավուշի մարզի դպրոցների՝ բարձրագույն կրթություն չունեցող 22 ուսուցիչ ազատվել է աշխատանքից: Նրանցից մի քանիսի հետ զրույց ունենալով՝ իմացանք, որ նրանք կամավոր ատեստավորման նոր գործընթացին չեն մասնակցելու, ցանկություն չունեն բուհում սովորելու, որովհետեւ վստահ չեն, թե բուհն ավարտելուց հետո՝ 4 տարի հետո, դպրոցում ուսուցչի աշխատանք կունենան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆՆԱԽԱԴԵՊ

ԳՅՈՒՏԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԵՐ

Հայաստանի էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի միջոցով գյուտերի Եվրասիական արտոնագիր ստանալու համար, վերջին 20 տարիների համեմատ, անցած տարի աննախադեպ՝ 11 հայտ է ներկայացվել:

Այս մասին ՋԼՄ-ների հետ զրույցում տեղեկացրեց գրասենյակի Գյուտերի եւ արդյունաբերական դիզայնների փորձաքննության բաժնի պետ Ավետիս Պերյանը՝ նշելով, որ մինչ այդ Եվրասիական արտոնագրերի հայտերի քանակը սովորաբար տարեկան 1-3 էր լինում:

«Ավելի քան 20 տարի է՝ այս ոլորտում եմ, պրակտիկայում չեմ հիշում նման քանակությամբ հայտեր: Իհարկե, այստեղ իր դերը խաղացել է այն, որ 1 հայտատու 6-7 հայտ է միանգամից ներկայացրել: Շատ քանակությամբ հայտերը վերաբերում էին հացաբուլկեղենի տարբեր սարքավորումներին՝ բլիթների, լավաշների արտադրության հոսքագծեր էին: Կոնկրետ այդ հայտատուն այստեղ արտադրում է այդ հոսքագծերը եւ վաճառում ԱՊՀ երկրներում, որտեղ արտոնագիրը գործող է համարվում»,-ասաց Պերյանը՝ հավելելով, որ հայտատուի ներկայացուցչի ներկայացմամբ՝ հոսքագծերն այդ երկրներում լավ պահանջարկ ունեն:

Ընդհանուր առմամբ, 2023 թվականի վերջի դրությամբ Հայաստանում գործել է 7324 Եվրասիական արտոնագիր:

Բացի այդ, ամեն տարի հայտեր են ստացվում արտասահմանյան տարբեր երկրներից, առավել հաճախ՝ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, իսկ մնացած երկրների շարքն անընդհատ փոփոխվում է: Եղել են տարիներ, որ գրասենյակը Թայվանից է գյուտի արտոնագիր ստանալու հայտեր ստացել կոշիկի տարատեսակ տակացուների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է անցած տարվա ընդհանուր ցուցանիշներին, ապա, ըստ Պերյանի, գրասենյակ ներկայացվել է 112 հայտ՝ 22 գյուտի եւ 90 կարճաժամկետ գյուտերի արտոնագրեր ստանալու համար:

Մասնավորապես՝ գյուտի արտոնագիր ստանալու հայտերից 11-ը ստացվել է ազգային, իսկ մյուսները՝ օտարերկրյա հայտատուներից:

«Հայտերի 51,79 տոկոսը ներկայացրել են ֆիզիկական անձինք, 48,21 տոկոսը՝ իրավաբանական, այդ թվում՝ առեւտրային կազմակերպություններ՝ մոտ 19 տոկոս, եւ բուհեր կամ գիտական հաստատություններ՝ մոտ 30 տոկոս: Այդ հարաբերակցությունը 2022 թվականի համեմատ գրեթե նույնն է մնացել»,-հայտնեց նա՝ համեմատության համար նշելով, որ միջազգային չափորոշիչներով մեծամասամբ հայտեր ներկայացնում են իրավաբանական անձինք, քանի որ նրանք կարող են որեւէ բնագավառում ներդնել այդ գյուտը:

Պերյանն ընդգծեց, որ Հայաստանում գյուտերի արտոնագրման համար զեղչային համակարգ է նախատեսված տարբեր հայտատուների համար: Մասնավորապես, ֆիզիկական անձինք օգտվում են պետական տուրքի 75 տոկոս զեղչից, ուստի շատերը թեկուզ իրավաբանական անձինք են, բայց գերադասում են որպես ֆիզիկական անձ ներկայացնել հայտը:

Անդրադառնալով հարցին, թե ինչ հետաքրքրություն ունեն արտասահմանցի հայտատուները Հայաստանում գյուտերի արտոնագրեր ստանալու առումով, բաժնի պետը նախ ներկայացրեց, որ, օրինակ, միջազգային ընթացակարգով Հայաստանում անցած որոշ հայտեր վերաբերել են ատոմային էներգետիկայի բնագավառին՝ տարբեր թափոնների մշակմանը, տեղափոխմանը եւ այլն. տեսնելով, որ Հայաստանում գործում է ատոմակայան՝ հայտ են ներկայացնում:

«Նույն կերպ կարող են ներկայացնել նաեւ այն ոլորտների վերաբերյալ, որոնք Հայաստանում զարգացած են»,-ասաց Պերյանը:

Անցած տարի գյուտերի արտոնագրման համար ստացված հայտերի բաշխվածությունն ըստ տեխնիկայի բնագավառի հետեւյալն է՝ 20,54 տոկոսը վերաբերել է սննդամթերքի եւ ծխախոտի բնագավառին, իսկ երկրորդ եւ երրորդ տեղերում՝ բժշկության ու անասնաբուժության, դեղերի եւ դեղամիջոցների ոլորտներն էին:

Դրանք տարբեր տեխնոլոգիաներ են, օրինակ՝ գինու, խմիչքի, սննդատեսակի ստացման եղանակներ, իսկ դեղերի դեպքում՝ այրվածքների դեմ քսուքներ, տարբեր հիվանդությունների բուժման եղանակներ:

Մյուս հայտերը՝ թվով ավելի պակաս, շինարարությանը, չափման եւ օպտիկային, տրանսպորտին, գյուղատնտեսությանը, էլեկտրական տեխնիկային կենսաքիմիային վերաբերող գյուտեր են եղել:

Ընդհանուր նշված ժամանակահատվածում տրվել է 83 արտոնագիր՝ նախորդ տարվա 97-ի փոխարեն, իսկ մերժված հայտերի քանակը կազմել է 2, հետ կանչվածներինը՝ 26:

«Մերժումները պայմանավորված են լինում գյուտի համար սահմանված արտոնագրության պայմաններին անհամապատասխանությամբ, այսինքն՝ նոր չեն, չունեն գիտական մակարդակ կամ արդյունաբերության մեջ կիրառելի չեն, օրինակ՝ հավերժական շարժիչ է»,-պարզաբանեց Պերյանը:

Նրա տեղեկատվությամբ՝ այս տարի արդեն մոտ 10 հայտ է ստացվել, որից 3-ը պատուհանների շրջանակների կառուցվածքների, մի քանիսը՝ սննդի ոլորտի վերաբերյալ եւ այլն:

Մտավոր սեփականության գրասենյակի գյուտերի եւ արդյունաբերական դիզայնների փորձաքննության բաժնի պետը կարեւորեց նոր գյուտի, նորարարության դեպքում արտոնագրումը՝ հեղինակային իրավունքների պաշտպանության, հետագայում երրորդ անձանց կողմից անօրինական օգտագործումը արգելելու, բացի այդ, ավելի վստահ ներդրումներ կատարելու եւ գործընկերներ գտնելու համար:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՎԵՐԳԵՏՆՅԱ ՄԱԼՈՒԽՆԵՐԸ՝ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՊՈՒՂԻՆԵՐՈՎ

Թումանյան, Վարդանանց եւ Խորենացու փողոցներում իրականացվում է վերգետնյա մալուխների անցկացում ստորգետնյա կապուղիներով: Փոխարինվում եւ վերանորոգվում են նախկին հենասյուները, տեղադրվում են էներգախնայող LED տեսակի լուսատուներ: Այս մասին հաղորդագրություն է տարածել Երեւանի քաղաքապետարանը:

Ծրագիրն իրականացվում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ համատեղ՝ վարկային ու դրամաշնորհային միջոցներով: Նախագծում ներառված է մայրաքաղաքի 28 փողոց: Հատկացված վարկի գումարը կազմում է 4.0 մլն ԱՄՆ դոլար, դրամաշնորհը՝ 1.9 մլն եվրո: Ծրագիրը մեկնարկել է 2019 թվականի հոկտեմբերին: Քաղաքի մի շարք հատվածներում մալուխներն արդեն իսկ անցկացվել են գետնի տակ, լուսավորության համակարգն էլ ամբողջությամբ արդիականացվել է:

Երեւանյան 28 փողոցների լուսավորության արդիականացումը նախատեսվում է ավարտել 2026 թվականին:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՐԿԵՐ

ՊԵԿ-Ի ՀԻՇԵՑՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետությունում եւ օտարերկրյա պետություններում հարկվող՝ եկամուտ ստացած ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ՀՀ օրենսդրության համաձայն, պարտավոր են հաշվարկել եւ վճարել եկամտային հարկ՝ սահմանված դրույքաչափերով: Այս մասին հաղորդագրություն է տարածել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:

Ստացված եկամուտներից հաշվարկված եկամտային հարկի գումարները նվազեցվում են ֆիզիկական անձանց կողմից օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարի չափով, ինչը չպետք է գերազանցի Հայաստանում հաշվարկվող եկամտային հարկի գումարները: Իսկ եթե Հայաստանում առաջանում է վճարման ենթակա եկամտային հարկ, ապա նրանք պարտավոր են ինքնուրույն հաշվարկել այն եւ մինչեւ հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի տարեկան հաշ-վար-կ:

Նշվում է, որ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջեւ հարկային օրենսդրության պահպանման եւ այդ բնագավառում խախտումների դեմ պայքարի հարցերով համագործակցության ու փոխադարձ օգնության մասին» 1999 թվականի հունիսի 4-ի համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները Աստանա քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 2-ին կնքել են «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջեւ էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրությունը, որը Հայաստանի Հանրապետությունում վավերացվել է 2020թ. փետրվարի 12-ին: Նշված արձանագրության շրջանակում հարկային մարմինը ստացել է տեղեկատվություն՝ ԱՊՀ անդամ պետություններում ֆիզիկական անձանց ստացած եկամուտների մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՊԵԿ-ը, օրենսդրությամբ սահմանված կարգով, ծանուցումներ է ուղարկել ՀՀ հարկային օրենսդրության համաձայն հարկեր հաշվարկելու եւ վճարելու պարտականություն ունեցող քաղաքացիներին՝ զերծ մնալով կոշտ վարչարարությունից: Միաժամանակ, Կոմիտեն պատրաստակամություն է հայտնում, մեղմ վարչարարության շրջանակում, թեմայի շուրջ քննարկումներ ծավալել հարկային օրենսդրության կարգավորումների մասով:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐԵԼ Է 1689 ԽԱԽՏՈՒՄ

Քնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը 2023 թվականին կենսաբազմազանության, մթնոլորտի պահպանության, ջրային ռեսուրսների եւ ընդերքի օգտագործման ու պահպանության ոլորտում արձանագրել է ընդհանուր առմամբ 1689 խախտում:

ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի կողմից 2023 թ. ընթացքում կատարված աշխատանքի ամփոփիչ միջոցառման ընթացքում այս մասին հայտարարեց ԲԸՏՄ ղեկավարի տեղակալ Վրեժ Գալոյանը:

Կենսաբազմազանության ոլորտում արձանագրվել է 1024 իրավախախտում (2022-ին՝ 897, 2021-ին՝ 1163): Նշանակվել է 24 մլն 120 հազար դրամի վարչական տուգանք (2022-ին՝ 25 մլն 310 հազար, 2021-ին՝ 32 մլն 880 հազար): Բուսական եւ կենդանական աշխարհին պատճառված վնասը գնահատվել է 1 մլրդ 273 մլն 384 հազար 433 դրամ (2022-ին՝ 913 մլն 515 հազար 844, 2021-ին՝ 1 մլրդ 16 մլն 345 հազար 864 դրամ):

Մթնոլորտի պահպանության ոլորտում արձանագրվել է 329 խախտման դեպք (2022-ին՝ 179, 2021-ին՝ 141): Կիրառվել է 26 մլն դրամի վարչական տույժ: Շրջակա միջավայրին պատճառած վնասը գնահատվել է 180 մլն 863 հազար 753 դրամ: Առանց սահմանային թույլատրելի արտանետման թույլտվության գործունեություն իրականացնելու համար կասեցվել է 10 տնտեսվարողի գործունեություն: Գերակշռում են շինարարության, բեռնատարներով՝ առանց անթափանց ծածկի սորուն նյութերի տեղափոխման, ընդերքի օգտագործման եւ խոզանների այրման (գյուղատնտեսություն) հետ կապված խախտումները:

2023-ին արձանագրվել է ջրային ռեսուրսների օգտագործմանն ու պահպանությանն առնչվող 161 իրավախախտում, կիրառվել է 45 մլն 850 հազար դրամի վարչական տուգանք, իսկ շրջակա միջավայրին պատճառված վնասը գնահատվել է 1 մլրդ 638 մլն 276 հազար 29 դրամ: Գերակշռել են ձկնաբուծության, ջրօգտագործող ընկերությունների եւ ՏԻՄ գործունեության հետ կապված խախտումները: Ստուգումների արդյունքում ապօրինի ջրառ իրականացնելու վերաբերյալ կայացվել է գործունեությունը կասեցնելու 33 որոշում:

2022-ին այս ոլորտում գրանցվել էր 99, 2021-ին՝ 110 իրավախախտում: Սահմանվել էր համապատասխանաբար 22 մլն 230 հազար եւ 19 մլն 820 հազար դրամի վարչական տուգանք: Շրջակա միջավայրին պատճառված վնասը 2022-ին գնահատվել էր 94 մլն 974 հազար 272, իսկ 2021-ին՝ 632 մլն 870 հազար 525 դրամ:

Համաձայն Վրեժ Գալոյանի ներկայացրած զեկույցի՝ նախորդ տարի ընդերքի օգտագործման եւ պահպանման ոլորտում արձանագրվել է իրավախախտման 175 դեպք՝ նախորդ տարվա 163-ի փոխարեն: Պետությանը պատճառվել է 1 մլրդ 800 մլն 918 հազար 616 դրամի վնաս (2022-ին այն կազմել էր 961 մլն 178 հազար 695 դրամ):

Հայտնաբերվել է ընդերքի ապօրինի օգտագործման 113 դեպք (անցյալ տարի 41-ն էր): Դրանցից 18-ն արձանագրվել է ընդերքի օգտագործման իրավունք ունեցող ընկերություններում իրականացված ստուգումների արդյունքում, իսկ 95-ը՝ տեսչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում: Պետությանը պատճառած 1,8 մլրդ դրամ վնասի չափը հաշվարկել է ՊԵԿ-ը:

Ընդերքի ապօրինի օգտագործման առավել շատ դեպքեր գրանցվել են Արմավիրի (31) եւ Արարատի (19) մարզերում: Դրանք պայմանավորված են ավազի ապօրինի արդյունահանմամբ: Գեղարքունիքում եւ Արագածոտնում գրանցվել է 14-ական, Սյունիքում՝ 10, Կոտայքում՝ 9, Շիրակում՝ 7, Տավուշում՝ 4, Լոռիում՝ 3, Վայոց ձորում՝ 2 դեպք: Բոլոր նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին:

Ապօրինի արտահանված հանքանյութի ծավալը կազմել է 2 մլն 787 հազար 275 խմ, որից ավազ՝ 1 մլն 192 հազար 264, բազալտ՝ 432 հազար 768, հողագրունտ՝ 397 հազար 134, պեռլիտ՝ 323 հազար 865, տուֆ՝ 307 հազար 258, այլ՝ 133 հազար 987 խմ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽ

1897 ՈՒՍԱՆՈՂ՝ ՇԱՀԱՌՈՒ

Ընթացիկ տարվա հունվարի դրությամբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 1897 ուսանող արդեն ներգրավված է ՀՀ պետական բուհերի համադասական կամ հարակից կրթական ծրագրերում եւ հանդիսանում է ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ծրագրի շահառու:

Այս մասին փետրվարի 16-ին «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսին տեղեկացրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը՝ներկայացնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կրթության իրավունքի վերականգնման ուղղությամբ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված աջակցության երկու ծրագրերի ընթացքը:

«ՀՀ ԿԳՄՍ նախարարության տվյալներով՝ ունենք Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 4640 սովորող, որից 2116-ը ԼՂ-ում սովորել են բարձրագույն, իսկ 2524-ը՝նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում»,-ներկայացրել է Հայոցյանը:

Կառավարության մյուս ծրագրով ուսման վարձի փոխհատուցում է նախատեսվում ՀՀ բուհերի ուսանող հանդիսացող ԼՂ այն քաղաքացիներին, ում ընտանիքի անդամները բռնի տեղահանվել են: Կառավարության համապատասխան որոշմամբ հաստատվել է ՀՀ նախնական, միջին եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչեւ 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընդգրկված սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը:

Ծրագրի շրջանակում նախնական հայտերի հիմքով աջակցություն է ստանում 844 շահառու:

«Թվային տվյալները երկու ծրագրերի դեպքում դինամիկ են, քանի որ ունենք որոշակի հոսունություն: Այդ պատճառով բուհերից ունենում ենք թարմացված տեղեկության հավաքագրման գործընթաց»,-եզրափակել է Հայոցյանը:

Է ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌՔ

Հայաստանի պատմության թանգարանում կայացավ 2023 թվականին թանգարանի կողմից հրատարակված գրքերի շնորհանդես-վաճառքը:

Ներկայացվել էին հետեւյալ աշխատությունները՝ Ա. Իսրայելյան՝ «Աղ ու հաց», «Լճաշենի ամրոցն ու դամբանադաշտը» (կազմող՝Բեն Վարդանյան), «Հայաստանի քարի դարը: Կատալոգ-պատկերագիրք: Հատոր I: Ստորին պալեոլիթ», Հ. Հովհաննիսյան՝«Sylloge Nummorum Byzantinorum Armenia IV. բյուզանդական դրամներ. Byzantine Coins (1028-1059)», «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի» պարբերականի 11-րդ եւ 12-րդ համարներ, L. Ավանեսյան՝ "The Etymology and Semantics of Ornaments in Armenian Carpets":

Հայաստանի պատմության թանգարանի գիտական գծով փոխտնօրեն Նժդեհ Երանյանը նշեց, որ 2021 թվականից արդեն ավանդույթի համաձայն՝ յուրաքանչյուր տարի, գրքի տոնին ընդառաջ, թանգարանը կազմակերպում է նախորդ տարվա հրատարակությունների շնորհանդես:

«Նախ ներկայացնում ենք նոր հրատարակությունները, որովհետեւ տեսնում ենք, որ ընթերցողները, հետազոտողներն ու մասնագետներն ունեն անմիջական շփման կարիք: Ընթերցողները գիրք ձեռք բերելուց զատ, ծանոթանում են հեղինակների հետ եւ միասին քննարկում բազմատեսակ հարցեր: Միջոցառումն այդ տեսանկյունից բավականին հետաքրքիր է: Այս անգամ ընթերցասեր հանրությանն ենք ներկայացրել վեց մենագրություն, կատալոգ եւ հետազոտական բնույթի տարբեր աշխատություններ, ինչպես նաեւ մեր թանգարանի աշխատությունների երկու նոր համարները: Ներկայացված գրքերն, ինչ խոսք, բազմաբովանդակ են՝ հնագիտությունից մինչեւ դրամագիտություն եւ ազգագրություն»,- ասաց Երանյանը:

Նրա տեղեկացմամբ՝ օրինակ՝ Լճաշենի հնավայրից հայտնաբերված քարե դարի գործիքների մասին պատմող աշխատությունը Հայաստանում իր տեսակի մեջ առաջինն է եւ դեռ խորհրդային ժամանակաշրջանից սպասված գիրք է, քանի որ շքեղ գտածոները պեղվել են մասնագետների, մասնավորապես՝ Հարություն Մնացականյանի արշավախմբի անդամների կողմից: Ներկայացրել ենք նաեւ թանգարանի զենքերի կատալոգը, որի երկամյա վաղեմության հրատարակումը հնարավոր եղավ հովանավորչության շնորհիվ: Հովանավորի ցանկությամբ՝ տպագրված 200 օրինակներն ամբողջությամբ սպառվեցին նվիրատվության եղանակով: Դրա վերահրատարակումը պայմանավորված է մեծ պահանջարկով: Կարեւոր արժեք են ներկայացնում նաեւ բյուզանդական դրամներին եւ գորգագործությանը նվիրված աշխատությունները: Վերջինը հրատարակվել է ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրված օտարերկրյա գրականության հանրահռչակման դրամաշնորհի միջոցով: Այն տպագրվել է 1000 օրինակով եւ բաժանվելու է աշխարհի տարբեր գրադարաններին ու համալսարաններին:

«Ներկայացված գրքերն իրենց գիտական արժեքով եւ գեղագիտական նշանակությամբ բարձորակ հրատարակություններ են, լուսանկարներով, ուղեկցող ընդարձակ ու հետաքրքիր տեքստերով: Մեզ համար առանձնահատուկ կարեւոր են նաեւ Պատմության թանգարանի երկու հատորները, որոնց հրատարակման աշխատանքները մեկնարկել են դեռ նախորդ դարի 40-ական թվականներից՝Կարո Ղաֆադարյանի գլխավորությամբ: Խորհրդային տարիներին հրատարակվել են որոշ համարներ (յոթերորդը՝ 1981 թվականին), տպագրական աշխատանքները վերսկսվել են 2021 թվականից: Արդեն ունենք հինգ ձեռնարկ, որոնց վերաբերյալ ստացել ենք շատ դրական արձագանքներ: Այնպես որ, մեր թանգարանի հատորները գեղագիտական ու գիտական առումով նույնպես ներկայանալի աշխատություններ են»,- ասաց Երանյանը:

Նա հավելեց, որ տարեկան փորձում են հրատարակել թանգարանի աշխատությունների առնվազն երկու հատոր՝ հետաքրքիր հոդվածներով, որոնց հեղինակները նաեւ արտասահմանից են: Օրինակ՝ 2023 թվականի հրատարակությունն իր մեջ ամփոփել է քառասուն հոդված, որոնցից տասներեքն արտերկրից էին:

«Մեր օրերում գիրք հրատարակելը բավականին բարդ ու ծախսատար գործընթաց է: 21-րդ դարում հնարավոր չէ հրատարակել ցածր տեխնիկական որակի գրքեր եւ ակնկալել, որ դրանք կունենան պահանջարկ: Հրատարակչական աշխատանքը, սկսած պատրաստական փուլից, հսկայական գործընթաց է: Չափազանց կարեւոր են նաեւ վերականգնողական աշխատանքները, եւ ես շնորհակալ եմ մեր ֆոնդապահներին ու վերականգնողներին՝ չերեւացող ծանր բեռն իրենց ուսերին կրելու համար: Տեքստերի պատրաստումը նույնպես ժամանակատար պրոցես է, որին միանում է թանգարանի ամբողջ թիմը: Մեր գրքերը հիմնականում հրատարակվում են մեր կարողություններով, այսինքն՝ թանգարանի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ձեւավորված միջոցներով: Դիմում ենք նաեւ մեկենասներին եւ հովանավորներին»,- ասաց Հայաստանի պատմության թանգարանի գիտական գծով փոխտնօրենը:

ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

ՀԱՎԵՐԺԻ ՎԱՎԵՐԱԳՐՈՂՆԵՐԸ

Գյումրու համայնքային ցուցասրահում բացվել է «Հավերժի վավերագրողները. Արամ, Արա, Արտաշես Վրույրներ» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսը: Ցուցահանդեսը նվիրված է դերասան, լուսանկարիչ Արամ Վրույրի ծննդյան 160-ամյակին:

Թեեւ Արամ Վրույրի (Արամ Մաքասճյան 1863-1924 թթ.) անունը հիմնականում կապում են թատերական արվեստի հետ, սակայն բեմական եւ գրական գործունեությանը զուգընթաց շուրջ երեք տասնամյակ նա զբաղվել է հնագիտական լուսանկարչությամբ: 1904-1917 թթ. նա մասնակցել է Նիկողայոս Մառի գլխավորած գիտարշավներին, եւ հենց նրա անմիջական մասնակցությամբ էլ հայտնաբերվել են Անիի Գագկաշեն եկեղեցու ավերակները:

Ցուցադրությունում տեղ են գտել նաեւ Արամ Վրույրի որդիների՝ Արա եւ Արտաշես Վրույրների կողմից արված մի շարք արխիվային լուսանկարներ: Լուսանկարչի որդիների շնորհիվ պահպանվել եւ մեզ են հասել Ադրբեջանի կողմից ոչնչացված Ջուղայի՝ խաչքարերով հարուստ գերեզմանատան լուսանկարները:

Ցուցահանդեսը կազմակերպվել է Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի, Հայաստանի պատմության թանգարանի եւ Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի հետ համատեղ:

ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՋՈՂ ԵՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի անդամները հաջող են մեկնարկել Եվրոպայի առաջնությունում:

Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում ընթացող Եվրոպայի առաջնության 57 կգ քաշային կարգում Եվրոպայի բազմակի չեմպիոն Արսեն Հարությունյանը դուրս է եկել կիսաեզրափակիչ: Հարությունյանը 1/8 եզրափակչում հաղթել է Ուկրաինան ներկայացնող Կամիլ Կերյմովին՝ 10:0: Քանի որ այս քաշային կարգում մասնակիցները քիչ են, Արսեն Հարությունյանն այս հաղթանակից հետո միանգամից անցել է կիսաեզրափակիչ փուլ:

65 կգ քաշում Վազգեն Թեւանյանը 1/8 եզրափակիչում գերազանցեց լեհ Կրիստոֆ Բինկովսկուն:

70 կգ քաշային Արման Անդրեասյանը 1/8 եզրափակչում 3:1 հաշվով առավելության հասավ Գերմանիան ներկայացնող Ալեքսանդր Սեմիսորովի նկատմամբ:

79 կգ քաշային Արման Ավագյանը 1/8 եզրափակիչում 6:6 հաշվով պարտության մատնեց (հաղթանակը տրվում է վերջին միավորը վաստակողին) Ռումինիան ներկայացնող Լակուբ Շիդզալամովին:

97 կգ քաշային կարգում Սերգեյ Սարգսյանը պարտվեց 1/8 եզրափակիչում՝ զիջելով Ահմեդ Բատաեւին:

ՀԱՄԱԼՐԵԼ Է ԿԱՋՄԸ

Երեւանի «Ալաշկերտ»-ը շարունակում է համալրել կազմը մրցաշրջանի երկրորդ հատվածի մեկնարկից առաջ:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

«Ալաշկերտի» կազմը համալրել է ուկրաինացի պաշտպան Վադիմ Պարամոնովը: Վերջինս հայրենիքում հանդես է եկել «Պոլտավա», «Լվով», «Կոլոս» եւ «Ռուխ» ակումբներում, ավելի քան 50 հանդիպման է մասնակցել Ուկրաինայի պրեմիեր լիգայում:

Պարամոնովը երեք մրցաշրջան է անցկացրել Երեւանի «Ուրարտու»-ի կազմում՝ դառնալով Հայաստանի չեմպիոն եւ գավաթակիր:

«Ալաշկերտ»-ի նորեկը թիմի կազմում մասնակցել է Բելեկում կայացած ուսումնամարզական հավաքին:

ՆՈՐ ՏՐԱՆՍՖԵՐ

Երեւանի «Նոա» ֆուտբոլային ակումբը հայտարարել է նոր տրանսֆերի մասին: Ինչպես հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը, թիմին է միացել Նոր Զելանդիայի հավաքականի 25-ամյա հարձակվող Լոգան Ռոջերսոնը:

Ռոջերսոնը կարիերայի սկզբնական փուլն անցկացրել է Նոր Զելանդիայի առաջնությունում:

2021 թ. Ռոջերսոնը միացել է ֆիննական ՀԻԿ-ին, այնուհետեւ տեղափոխվել է նույն առաջնությունում հանդես եկող «Հակա»:

Ֆինլանդիայի առաջնությունում մեր թիմի նորեկն անցկացրած 52 խաղում դարձել է 7 գոլի եւ 11 գոլային փոխանցման հեղինակ: Նոր Զելանդիայի ազգային հավաքականում անցկացրած 9 խաղում Ռոջերսոնը դարձել է 1 գոլի հեղինակ:

● *Փետրվարի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Յ. Ս. Բախ. «Սի մինոր Մեսսա»» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-15000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ սվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:

Հայկ Օհանյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,
2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,
3) 3x4 չափի լուսանկար՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,
4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից (ըստ անհրաժեշտության),
5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնառիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,
6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության):

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում ներկայացվում է փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որքա՞ն է հարակից իրավունքների գործողության ժամկետը:

Ժորա Նալբանդյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարակից իրավունքների պահպանության ժամկետը, համաձայն Հռոմի կոնվենցիայի, առնվազն 20 տարի է, սակայն ազգային օրենքներով կարող են սահմանվել պահպանության ավելի երկար ժամկետներ:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարակից իրավունքների պահպանության ժամկետները սահմանված են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

2013 թվականից Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում հանրային տրանսպորտը տեղացիների համար անվճար է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 1 + 3 + 6
	Կոտայքի լեռներ	0 - 3 + 2 + 5
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6 + 7 + 10
	Գեղարքունիք	- 3 + 1 + 2 + 6
	Լոռի	- 1 + 2 + 2 + 5
	Տավուշ	0 + 5 + 3 + 7
	Արագածոտնի լեռներ	0 - 3 + 2 + 4
	Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 8 + 12

	Արարատ	+ 4 + 7 +12 + 14
	Արմավիր	+ 4 + 7 +11 + 13
	Վայոց ձորի լեռներ	- 1 - 5 + 2 + 4
	Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7 +10 + 14
	Սյունիքի հովիտներ	+ 2 + 5 + 8 + 11
	Սյունիքի նախալեռներ	- 1 + 2 + 3 + 5
	ԼՂՀ	- 1 + 3 + 3 + 6
	Երեւան	+ 8 + 10 +13 + 15

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*